«Գրանցված է» ՀՀ արդարադատության նախարարության կողմից
17 հունվարի 2008 թ.
Պետական գրանցման թիվ 05008021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

12 դեկտեմբերի 2007 թ. ք. Երևան N 409-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության նկատմամբ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը, որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել տնտեսական նորմատիվների կամ տեխնիկական պահուստների սահմանված չափերից նշանակալից շեղումների առկայության դեպքում:

2. Նշանակալից շեղում է համարվում տնտեսական նորմատիվի կամ տեխնիկական պահուստի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափերից 10 և ավելի տոկոսի չափով նվազումը (բացառությամբ ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի նորմատիվի, առանձին վերցված ակտիվների համարժեքության նորմատիվի):

3. Ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի նորմատիվի գծով նշանակալից շեղում է համարվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված առավելագույն չափից 10 և ավելի տոկոսի (մեկ և ավելի տոկոսային կետի) չափով գերազանցելը:

4. Առանձին վերցված ակտիվների համարժեքության նորմատիվի գծով նշանակալից շեղում է համարվում ապահովագրական ընկերության տեխնիկական պահուստների հանրագումարից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ի իմաստով տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների հանրագումարը 10 և ավելի տոկոսի չափով պակաս լինելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Տ. Սարգսյան**

2007 թ. դեկտեմբերի 17 Երևան